

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄՏԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ
<p>1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p>	<p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձի գործառույթները իրականացում է հասարակայնության հետ կապերի բաժնի պետը:</p> <p>Վերոնշյալ գործառույթները կանոնակարգվում են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտ չի կիրառվում:</p> <p>Տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու պաշտոնատար անձի պարտականություններն ամրագրված են հասարակայնության հետ կապերի բաժնի պետի պաշտոնի անձնագրում:</p> <p>Նախարարության կայքէջի «Դիմումների տեսություն» բաժնում յուրաքանչյուր ամիս տեղադրվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների տեսության վերլուծություն:</p>
<p>2. ՀՀ տարածքային կառավարման նախարարություն</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու պաշտոնատար անձի գործառույթները ՀՀ տարածքային կառավարման նախարարի ցուցումով դրված են նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետի վրա: «Տեղեկատվության ազատության» մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված գործառույթների իրականացումը</p>

	<p>նախարարությունում ապահովված է:</p>
<p>3. ՀՀ առողջապահության նախարարություն</p>	<p>1. ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի օգոստոսի 25-ի թիվ 2010-Ա հրամանով տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձ է նշանակվել ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանը:</p> <p>2. ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական կայքի գլխավոր էջում առկա են «Տեղեկատվության պատասխանատու՝ հեռ. (+374 10) 56-56-08», «Տեղեկատու հեռ.՝ (+374 10) 54-40-27, (+374 10) 54-40-28», «Կայքի տեխնիկական ադմինիստրատոր՝ webmaster@moh.am» կոնտակտները:</p> <p>3. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի կանոնադրությունում, ինչպես նաև հասարակայնության հետ կապերի բաժնի պետի պաշտոնի անձնագրում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներն ամրագրված են և կատարվում են տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձի կողմից:</p>
<p>4. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p>	<p>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունում տեղեկատվության ազատության ապահովման գործառույթների իրականացումը և համակարգումը վերապահված է ՀՀ ԱԻՆ աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանը: Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձինք են ԱԻՆ փրկարար ծառայության տնօրենի՝ տվյալ ոլորտը համակարգող տեղակալը և ԱԻՆ աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետը:</p> <p>Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար</p>

	<p>անձի պարտականությունների և վերջինիս գործառույթների իրականացման հետ կապված հարցերը կանոնակարգվում են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի՝ 29.03.2013 թ. թիվ 300-Ա հրամանով հաստատված ՀՀ ԱԻՆ աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության կանոնադրությամբ: Տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու պաշտոնատար անձի պարտականություններն ամրագրված են նաև վերջինիս պաշտոնի անձնագրում:</p>
<p>5. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն</p>	<p>Ի կատարումն ՀՀ վարչապետի վերոնշյալ հանձնարարականի՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2014թ. հոկտեմբերի 31-ի N 144-Ա հրամանով ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձ է նշանակվել նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետը, որի վերաբերյալ նախարարության պաշտոնական կայքում (www.mineenergy.am) տեղադրվել է հասարակության համար հասանելի տեղեկատվություն:</p> <p>Միաժամանակ տեղեկացնում ենք, որ տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու պաշտոնատար անձի պարտականությունները տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետի պաշտոնի անձնագրում ամրագրելու վերաբերյալ առաջարկությունը կներկայացվի ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ:</p>
<p>6. ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն</p>	<p>Ներկայացվել է պատասխանատու անձ նշանակելու մասին հրամանի պատճենը:</p> <p>Գլխավոր վարչության մամուլի քարտուղար՝ ՏԱ պատասխանատու անձ:</p>
<p>7. ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p>	<p>Ի կատարումն Ձեր 07.10.2014թ. թիվ 02/16.8/16657-14 գրության՝ ՀՀ վարչապետի հանձնարարականի՝ Ձեզ եմ ներկայացնում ՀՀ կրթության և գիտության նախարարության</p>

	<p>աշխատակազմի հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության պետ Արթուր Բաղդասարյանին նախարարության աշխատակազմի տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու պաշտոնատար անձ նշանակելու մասին հրամանի պատճենը:</p> <p>Միաժամանակ տեղեկացնում եմ, որ տեղեկատվության ազատության ապահովման և տրամադրման գործառույթն ամրագրված է նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության կանոնադրությունում և վարչության աշխատակիցների պաշտոնների անձնագրերում:</p>
<p>8. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե</p>	<p>ՏՄ պատասխանատու՝ Կադաստրի պետական կոմիտեի ընդհանուր բաժնի պետ:</p>
<p>9. ՀՀ սփյուռքի նախարարություն</p>	<p>Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում աշխատակազմի տեղեկատվության և հեռահաղորդակցության վարչությունը, իսկ պատասխանատու պաշտոնատար անձ՝ նշված ստորաբաժանման ղեկավարը: Վարչության կողմից տեղեկատվության ազատության ապահովման համար պարտականությունների և գործառույթների իրականացման հետ կապված որոշ հարցեր կանոնակարգված են Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 231-Ս հրամանով հաստատված կանոնադրությամբ, իսկ պատասխանատու պաշտոնատար անձի որոշ պարտականություններ ամրագրված են վերջինիս պաշտոնի անձնագրում:</p>
<p>10. ՀՀ ազգային անվտանգության ծառայություն</p>	<p>ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձը ՀՀ ԱԱԾ տնօրենն է՝ ելնելով</p>

	<p>գործունեության առանձնահատկություններից և ծառայության կողմից տնօրինվող տեղեկատվության բազմազանությունից:</p>
<p>11. ՀՀ քաղաքաշինության նախարարություն</p>	<p>ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի կառուցվածքում առկա է Նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին (այսուհետ՝ Բաժին), որի նպատակն է Նախարարության տեղեկատվական քաղաքականության կազմակերպումը: Բաժնի հիմնական գործառույթներից է ՀՀ քաղաքաշինության նախարարի, նախարարի տեղակալների, աշխատակազմի ղեկավարի, Նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, այլ պաշտոնատար անձանց գործունեության մասին հանրության իրազեկման կազմակերպումը՝ մամուլի հաղորդագրությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, տեսա-ֆոտո նյութերի և այլ տեղեկատվական նյութեր պատրաստելու և տարածելու միջոցով: Նշված աշխատանքները պատշաճ իրականացնելու նպատակով Բաժինն աշխատակազմի ստորաբաժանումներից ստանում է տեղեկություններ և նյութեր այդ թվում՝ մշակվող իրավական ակտերի նախագծերի պատճենները և անհրաժեշտության դեպքում կազմակերպում է դրանց լուսաբանումն ու հանրային քննարկումը: Համակարգում է նախարարության պաշտոնական կայքէջի տեղեկատվական սպասարկման աշխատանքները: Վերահսկում է կայքէջում նյութերի համալրման, թարմացման և փոփոխման գործընթացը:</p> <p>Նշված գործառույթները սահմանված են ՀՀ քաղաքաշինության նախարարի 2012 թվականի նոյեմբերի 2-ի N176-Ս/3 հրամանով հաստատված Բաժնի կանոնադրության մեջ, ինչպես նաև ամրագրված են Բաժնի աշխատողների քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում:</p>

<p>12. ՀՀ ֆինանսների նախարարություն</p>	<p>Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից համակարգվող ոլորտները բազմաբնույթ են, հետևաբար ըստ ոլորտների նշանակվել են տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատուներ և դրա հետ կապված գործառնությունները նախատեսվել են համապատասխան պաշտոնի անձնագրերով /նկարագրերով/:</p>
<p>13. ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն</p>	<p>Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության (այսուհետ՝ Վարչություն) տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձ է Վարչության մամուլի քարտուղարը, ինչպես նաև Վարչության աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները, ովքեր Վարչության աշխատակազմի ներքին գործավարության կարգի համաձայն՝ տեղեկություն փնտրողին մատչելի ձևով և սահմանված ժամկետներում տրամադրում են անհրաժեշտ տեղեկատվությունը:</p> <p>Վարչության տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու անձի վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրված է www.spm.am պաշտոնական ինտերնետային կայքի «Հետադարձ կապ» բաժնում:</p> <p>Վարչության մամուլի քարտուղարի պաշտոնը քաղաքացիական ծառայության պաշտոն չէ, ուստի Վարչության մամուլի քարտուղարի հիմնական պարտականություններն և գործառնություններն ամրագրված են նրա աշխատանքային պայմանագրում:</p>
<p>14. ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p>	<p>«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու պաշտոնատար անձ է նշանակվել նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Եկատերինա Խաչատրյանը, և վերջինիս գործառնությունների</p>

	<p>իրականացումը և համակարգումը վերապահվել է նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին: Պատասխանատու անձի օրենքով սահմանված պարտականություններն առանձին ամրագրված չեն վերջինիս պաշտոնի անձնագրում, սակայն անձնագրի 7-րդ գլխի 11-րդ կետի վերջին պարբերության համաձայն՝ առաջատար մասնագետը կրում է այլ իրավական ակտերով նախատեսված այլ պարտականություններ:</p>
<p>15. ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</p>	<p>ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու անձ հանդիսանում է տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետը, որի գործառույթների մեջ, ի թիվս այլ գործառույթների, մտնում է նաև տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացման ապահովումը, տեղեկություն փնտրողին տեղեկության տրամադրման կարգի, պայմանների և ձևերի մատչելի ձևով բացատրումը, ստացված հարցումների վիճակագրական և ամփոփ տվյալները մշակումը և այլն: Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձի գործառույթների իրականացումը և համակարգումը ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում վերապահվել է տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին: Տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու պաշտոնատար անձի պարտականությունները ամրագրված են վերջինիս պաշտոնի անձնագրում և տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կանոնադրությամբ /պաշտոնի անձնագիրը և բաժնի կանոնադրությունը կցվում են/:</p>
<p>16. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն</p>	<p>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2012 թ.-ի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության տրանսպորտի եվ կապի նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու և Հայաստանի</p>

	<p>Հանրապետության տրանսպորտի եվ կապի նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 258-Ա հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 48-Ա հրամանի համաձայն տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու պաշտոնատար անձի գործառույթների իրականացումը և համակարգումը վերապահված է աշխատակազմի հասարակության հետ կապերի բաժնին, իսկ տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու պաշտոնատար անձ սահմանված է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի հասարակության հետ կապերի բաժնի պետը:</p>
<p>17. ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե</p>	<p>Պատասխանատու պաշտոնատար անձ է նշանակվել կոմիտեի աշխատակազմի ղեկավար Սուրեն Ամանյանը:</p>
<p>18. ՀՀ բնապահպանության նախարարություն</p>	<p>ՀՀ բնապահպանության նախարարությունում տեղեկատվության ազատության ապահովող պաշտոնատար անձ է նշանակվել ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետը /ի պաշտոնը/: Վերջինս համակարգում է նախարարության՝ տեղեկություն տալու կարգի մշակման, հրապարակման, այն բոլորի համար տեսանելի տեղում փակցնելու աշխատանքները, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների և նախարարի, նախարարի տեղակալների, նախարարության աշխատակազմի այլ պաշտոնատար անձանց մասնակցությամբ աշխատանքային հանդիպումների կազմակերպման աշխատանքները: Իրականացնում է մամուլի ասուլիսների, հարցազրույցների, ճեպագրույցների, նախարարության գործունեության ոլորտին առնչվող հասարակական հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ հայտարարությունների հրապարակումների կազմակերպման, ինչպես նաև մամուլի հաղորդագրությունների պատրաստման և տարածման աշխատանքները, հանդես է գալիս պարզաբանումներով ու</p>

	<p>հայտարարություններով:</p> <p>Տեղեկատվության ազատությունն ապահովող պատասխանատու անձի գործառույթների իրականացման ապահովումը վերապահված է ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանը և ՀՀ բնապահպանության նախարարության <<Տեղեկատվական վերլուծական կենտրոն>> ՊՈԱԿ-ին:</p> <p>Տեղեկատվության ազատությունն ապահովող պատասխանատու անձի պարտականությունները կանոնակարգվում են ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 8-ի N 1237-Ն որոշմամբ հաստատված ՀՀ բնապահպանության նախարարության կանոնադրությամբ, վերոհիշյալ վարչության կանոնադրությամբ և այդ ստորաբաժանման քաղաքացիական ծառայողների պաշտոնի անձնագրերով:</p>
<p>19. ՀՀ մշակույթի նախարարություն</p>	<p>ՀՀ մշակույթի նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 28-ի N 667-Ա հրամանով նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետը նշանակվել է տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու պաշտոնատար անձ:</p> <p>Պատասխանատու անձի պարտականություններն ամրագրված են պաշտոնի անձնագրում:</p> <p>Մինչև ժամանակ հայտնում ենք, որ տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու պաշտոնատար անձի վերաբերյալ տեղեկույթը տեղադրվել է նախարարության պաշտոնական կայքէջի /mincult.am/ համապատասխան բաժնում:</p>
<p>20. ՀՀ պաշտպանության նախարարություն</p>	<p>Հանրության հետ տարվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մշակվել և ՀՀ պաշտպանության նախարարի 09.12.2010 թվականի թիվ 1456 հրամանով գործողության է դրվել պաշտպանության նախարարության հանրային իրազեկման հայեցակարգը (տեղադրված է պաշտպանության նախարարության պաշտոնական կայքում), ՀՀ</p>

	<p>պաշտպանության նախարարի՝ 14.09.2013 թվականի թիվ 1028 հրամանով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության նոր կանոնադրությունն ու կառուցվածքը»՝ (հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 1554-Ն որոշման 13-րդ կետի 9-րդ ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2009 թվականի մարտի 16-ի թիվ 300 հրամանի՝ 20-րդ և 21-րդ հավելվածները շարադրվել են նոր խմբագրությամբ):</p> <p>ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու պաշտոնատար անձ է համարվում ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետը, որի պարտականությունները ամրագրվել են վերոնշյալ վարչության կանոնադրությունում և վարչության պետի պաշտոնի անձնագրում, իսկ տեղեկատվության ազատության ապահովման համակարգը վերապահվել է ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանը:</p> <p>Վարչության նպատակներն են՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Նախարարության համակարգում միասնական և արդյունավետ տեղեկատվական քաղաքականության ապահովումը, 2. Բանակ-հասարակություն կապի ամրապնդումը ու զարգացումը, 3. Երիտասարդության հայրենասիրական դաստիարակության, ազգային ինքնագիտակցության մակարդակի բարձրացումը և այլն: <p>Վարչության խնդիրներն են՝</p>
--	---

	<p>1. տեղեկատվական նյութերի համակարգման և հակազդման ծրագրային հարցերի՝ մասնագիտական բարձր մակարդակով վերլուծության ապահովումը, ծագած խնդիրների արդյունավետ լուծման ուղիների մշակումը</p> <p>2. տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում պետական և ոչ պետական համապատասխան մարմինների ու կազմակերպությունների հետ արդյունավետ համագործակցության ձևավորումը և զարգացումը, փորձի փոխանակումը, համակարգված միջոցառումների իրականացումը</p> <p>3. ռազմաքաղաքական առկա իրավիճակի վերաբերյալ հանրության հստակ պատկերացմանը, ՀՀ զինված ուժերի դեմ ուղղված հնարավոր տեղեկատվական սպառնալիքների ու մարտահրավերների գիտակցմանը միտված վերլուծական նյութերի պատրաստումը,</p> <p>4. Նախարարության համակարգի լրատվամիջոցներով «Հայ զինվոր», պաշտոնաթերթ, «Զինուժ» հեռուստածրագիր, «Ասպար» ռադիոհանդես, համացանցի պաշտոնական կայքէջ և տեղեկատվության տարածման այլ միջոցներ) պաշտպանական գերատեսչությանը վերաբերող տեղեկատվության հանրային իրազեկումը, պաշտպանական քաղաքականության թափանցիկության ապահովումը</p> <p>5. բանակ-հասարակության կապի զարգացմանն ու ամրապնդմանը նխատեսառողիված աշխատանքների մշակումն ու կազմակերպումը, փոխվստահության մթնոլորտի ապահովումը</p> <p>6. միջազգային փորձի կիրառման, նպատակային ծրագրերի իրականացմամբ բանակի նկատմամբ հասարակական կառույցների քաղաքացիական վերահսկողության խորացմանն օժանդակելը և այլն;</p>
--	--

	<p>Վարչությունն իրականացնում է հետևյալ գործառնությունները՝</p> <ol style="list-style-type: none"> 1. իրականացնում է բանակ-հասարակություն կապի ամրապնդմանը, զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ընդլայնմանը նպատակաուղղված ծրագրեր 2. մշակում և իրականացնում է հանրության հայրենասիրական ոգու բարձրացմանը նպաստող միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր, թողարկում տեսանյութեր, հեռուստառադիոհաղորումների, հրապարակումների և համացանցի միջոցով ապահովում է հանրային իրազեկում 3. ներդնում է տեղեկատվական շտեմարան-պահոցի (ֆիլմեր, տեսաձայնագրություններ և այլ նյութեր) ծրագրային փաթեթը, ինչպես նաև ապահովում է դրա կատարելագործման շարունակականությունը 4. ապահովում է համացանցում Նախարարության պաշտոնական կայքի տեղեկատվական սպասարկումն ու զարգացումը, 5. իրականացնում է սոցիոլոգիական հետազոտություններ հանրության տարբեր խավերի և թիրախային խմբերի շրջանում 6. Իրականացնում է օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված այլ գործառնություններ <p>SU պատասխանատու անձ է հանդիսանում նաև մամուլի քարտուղարը:</p>
<p>21. ՀՀ արտաքին գործերի նախարարություն</p>	<p>Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում տեղեկատվության ազատության ապահովման գործառնությունների համակարգում իրականացվում է ՀՀ ԱԳՆ աշխատակազմի մամուլի, տեղեկատվության և հասարակայնության հետ կապի վարչության պետի և մամուլ խոսնակի կողմից: Ելնելով կոնկրետ տեղեկատվության բնույթից՝</p>

	<p>տեղեկատվության տրամադրմանը ներգրավվում են նաև ՀՀ ԱԳՆ աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումները:</p>
<p>22. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</p>	<p>Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունում տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու պաշտոնատար անձ է համարվում նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Անուշ Չիթչյանը, որի գործառույթների իրականացումն ու համակարգումը վերապահվել է բաժնին, անմիջականորեն ենթակա և հաշվետու է նախարարության աշխատակազմի ղեկավարին:</p> <p>Տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու պաշտոնատար անձն իր պարտականությունները և բաժնի առջև դրված գործառույթներն իրականացնելիս առաջնորդվում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով և Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2008 թվականի դեկտեմբերի 17-ի № 60-Ս/5 հրամանով հաստատված քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրում (կցվում է) ամրագրված դրույթներով:</p>
<p>23. ՀՀ ոստիկանություն</p>	<p>Նկատի ունենալով ՀՀ ոստիկանության առանձին ստորաբաժանումների մասնագիտական գործունեության տարբեր ուղղությունները և ըստ ոլորտների հավաքվող ու մշակվող տեղեկությունների բազմազանությունը, ՀՀ ոստիկանության կողմից տեղեկատվության տրամադրման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում տվյալ ստորաբաժանումը կամ պաշտոնատար անձը ինքն է տրամադրում իր կողմից հավաքած և մշակած տեղեկությունները: ՀՀ ոստիկանության պետի հանձնարարությամբ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից</p>

	<p>ն հասարակական կազմակերպություններից ստացվող հարցումներին, ինչպես նաև քաղաքացիների դիմում-բողոքներին պատասխանելու իրավագործությունը, որպես «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված՝ տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ, վերապահված է ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության պետ, ոստիկանության փոխնգապետ Մերուժան Առուշանի Հակոբյանին:</p>
--	---